**Գևորգ Պողոսյան**
**Խորհրդի անդամ**

Ծննդյան ամսաթիվ՝ 13/02/1986

Գևորգ Պողոսյանը զարգացման տնտեսագետ է, ունի 10+ տարվա փորձ բիզնես միջավայրի բարեփոխումների ոլորտում՝ կենտրոնանալով հանրային մասնավոր երկխոսության վրա: Փորձի ոլորտներն են ՓՄՁ միջավայրի բարելավումը, սկսնակ էկոհամակարգի զարգացումը, Սոցիալական ձեռներեցության խթանումը, բիզնես ինկուբատորների ստեղծումը և այլն:

Ներկայում Գևորգը Իմփաքթ Հաբ Արմենիա ընկերության գործադիր տնօրենն է: Նա իր կարիերան սկսել է տեղական առևտրային բանկում 2007 թվականին, իսկ ավելի ուշ՝ 2009 թվականին, միացել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեսչական բարեփոխումների թիմին, որտեղ ղեկավարել է կարգավորիչ բարեփոխումների ծրագիրը: Ավելի ուշ՝ 2012 թվականին, նա դարձավ ՎՋԵԲ-ի բիզնեսի աջակցության գրասենյակի ղեկավարը, որտեղ վարում էր պետական-մասնավոր հատված երկխոսությունը՝ ուղղված Հայաստանում բիզնես միջավայրի բարելավմանը:

Գևորգը 2003-2008 թթ. սովորել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ֆինանսների և վարկ ֆակուլտետում, իսկ ավելի ուշ՝ 2008-2010 թթ., ԳԱԱ Տնտեսական ինստիտուտում և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2022թ. նա հանդիսանում է Ագրոլիզինգ ԼՎԿ ՍՊԸ-ի խորհրդի անդամ: